

- է. Հայրապետ Մասուժեանց ի 1825 ամի:
- չ. Գէորգ Ֆռանգուլեանց ի 1832 ամի:
- է. Գրիգոր Ասատուրեանց ի 1843 ամի:
- ը. Սարգիս Մակարեանց ի 1848 ամի:
- ը. Սարգիս Գալստեանց ի 1851 ամի:
- ժ. Ստեփաննոս Կիրէյեանց ի 1861 ամի:
- ժ. Յարութիւն Մատաթեանց ի 1865 ամի:
- ժ. Աստուածատուր Էլեագեանց ի 1869 ամի:
- ժ. Բաղդասար Պոստոլեանց ի 1875 ամի:

Սրբոցն Պետրոսի եւ Պողոսի Եկեղեցոյ :

- ա. Աքուլեցի Ստեփաննոս Էզիլիսանեանց ի 1778 ամի:
- բ. Միքայէլ Արզումանեանց:
- գ. Պօղոս Լալայեանց:
- դ. Յարութիւն Ֆռանգուլեանց:
- է. Դաւիթ Բիծայեանց:
- չ. Դանիէլ Սերգէյեանց ի 1816 ամի:
- է. Գրիգոր Սերգէյեանց:
- ը. Մկրտում Սերգէյեանց ի 1847 ամի:
- ը. Խաչատուր Գրիգորեան Սարգսեանց ի 1872 ամի:

Սուրբ Կասարիճ Եկեղեցոյ:

- ա. Աբրահամ Մազանդարանցեանց ի 1799 ամի:
- բ. Մովսէս Մազանդարանցեանց ի 1816 ամի:
- գ. Կարապետ Թափուզեանց:
- դ. Յարութիւն Դադաշեանց:
- է. Առաքել Մազանդարանցեանց:
- չ. Գրիգոր Սողոմոնեանց ի 1866 ամի:

Ս. Յարութիւն Գերեզմանասան Եկեղեցոյ:

- ա. Յարութիւն Մինասեանց:
- բ. Սահակ Խալաֆեանց:
- գ. Մկրտիչ Կամինեանց:
- դ. Գրիգոր Թէլէթեանց:
- է. Յակոբ Բուրդեանց:
- չ. Գէորգ Թէլէթեանց:
- է. Բաղդասար Բալասանեան:
- ը. Յովհաննէս Մասուժեանց:
- ը. Աղէքսանդր Բուրդաղեանց:
- ժ. Յարութիւն Իւանովեանց:
- ժ. Եփրեմ Մազանդարանցեանց ի 1874 ամի:

ՅՈՎՍԷՓ ԱԲԱԴ ԲԱԼԱՆԱՅ ԲՈՒՆԻԱԹԵԱՆՑ.

ՅԵՄԵՐԻԱՆ:

ՃԸՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵԳԻՊՏՈՍ.

(Շարունակութիւն)

Ձ.

Արդէն ասացաք ի կարգի պատմութեանս, եթէ ի ժամանակէ անտի Գրիգոր վարդապետի՝ որ զպատճէն հրովարտակին Մահմէտի արձանագրութեամբ եղ ի պահպանութիւն ի սուրբ Սարգիս Եկեղեցւոջ, այն է յամի Տեառն 1606, յինչ ցՂ ազար ե ցՅարութիւն վարդապետս, որք զառաջին հոգետուն ե զսառնիճն ետուն շինել արդեամբ Տփիսիսցի խաթունին յամի 1797, չգտանեմք յիշատակութիւն առաջնորդաց ժողովրդեանս աստ ի սուրբ Սարգիս յընթացս 191 ա-

մաց. չգտաննմք նոյնպէս և նախ քան զնոյն ինքն Գրիգոր վարդապետ յարձանազիրս անդ՝ Եռաջնորդ լիալուռք աստէն:

Սակաւք ոմանք յիշին յարձանազիրս յետ վերոյգրելոցն երկուց վարդապետաց. այլ առանց գործոց յիշատակութեան գիտեմք Եռաջնորդս լեալ ի Գասիրէ մինչև ցներկայ Գարբիէլ Եպիսկոպոս՝ անձինս ութն, միմեանց յաջորդելով ի Գազար և ի Յարութիւն վարդապետացն մինչև ի ներկայս:

Գազար և Յարութիւն վարդապետք Խիզանցիք յիշատակին յաւուրս շինութեան նախկին Եռաջնորդարանին և սառնրձին ի թուականին Հայոց ՌՄԽՕ (1797) յամս արշաւանացն Գաղղիացոց յԱզիպոս:

Յետ սոցա կացեալ են Եռաջնորդք Եզդիս՝ Պօղոս Եպիսկոպոս Երեւելցի, Վարապետ վարդապետ Վանեցի, Վարապետ վարդապետ Պօլսեցի, Ստեփան վարդապետ Սիպրացի, Վայծակ Վարապետ վարդապետ Վարնեցի, Սահակ վարդապետ Ուշտունի և Գրիգոր Եպիսկոպոս. սոքա առանց գործոց յիշատակին ի զիրս յիշատակարանաց. որոց անուանք յայտնի են է զի ի կոնդակաց աթոռոյն Երուսաղէմի, որպէս ասացեալ եմք, և է զի մօտ դուրով՝ կան նոցա ականատես ժամանակակիցք:

Վերակոս Եպիսկոպոս Երուսաղէմի, յորոյ աւուրս յիշատակին շինուածք բարեպաշտութեանց Եռաջնորդարանն, դպրատունն և հիւրատուն կամ հիւանդանոցն և այլն:

Գարբիէլ Եպիսկոպոս այժմեան Եռաջնորդ կառուցեալ է զհոյակապ եկե-

ղեցին ձեռնառութեամբք իշխանաց և արդեամբք կալուածոց, որ ամ ըստ ամէ բերէ մինչ ց40 հազար զուրուշ դումար դրամոց:

(Մատենի է յեդ-է-յո.)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԸ Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ.

Այս դժուար հարցը լուծելու համար թէպէտ բազմահմուտ հանճար եւ ճարտար գրիչներ պէտք են, սակայն իւրաքանչիւր ոք ըստ չափու եւ կարողութեան պարտական է եթէ ոչ մեծ՝ գէթ իւր փոքրիկ ծառայութիւնը մատուցանել իւր ազգակցաց, այն է դաստիարակութեան ամենաօգտաւէտ խնդրոյ համար, իւր հասկացած եւ կշռել կարողացած իղձերը եւ պէտքերը արտայայտելով:

Այս խնդրոյ վերաբերութեամբ թէեւ մի քանի անգամ խօսել են մեր արդի բանասէրներից ոմանք՝ բայց այս անգամ եւս թող աւելորդ չը համարուի խօսելը, որովհետեւ ժամանակը պահանջում է այսպիսի օգտաւէտ հարցերի համար շատ անգամ դիտողութիւնք եւ տեսութիւնք չափել:

Ուրեմն այժմ տեսնենք ժամանակը ի՞նչ է պահանջում:

Շատ անգամ թէ իսկ ականատես թէ ուրիշներից լսելով՝ եւ թէ մասնաւոր փորձառութեամբ Եւրոպայի ազգերը մեզ միշտ զարմանքներ են պատ-